

Կրկնակ եկեղեցիներ. — Կարիեք ել հեռապր ժԲ. դարու եկեղեցի մը ունի, լաւ պահպանուած եւ միակը իր տեսակին մէջ: Ան տարատրոհուած է 30 մ. երկարութեամբ և 23 մ. լայնութեամբ հռոմէական բերդիկի մը, 2.45 մ. թանձրութեամբ պատերով, արեւելեան պատը կամ սնարքը 0.75 մ. աւելի երկար է քան արեւմտեանը: Վերջերս նորոգուած պատի մը մէջէն գտնուած արձանագրութիւն մը ցոյց կուտայ թէ հոն կար Fretensis ժ. լէգէոնին մէկ գունդը զոր Վեսպասիանոս 70ին Երուսաղէմ թողած էր: Ստորնայարկ եկեղեցին ունէր 5 մ. բարձրութիւն, բայց իր յատակագիծը նման էր վերնայարկ եկեղեցիին: Մէկուն և միւսին մէջ երեք կողակները զուրսէն չեն երևիր, պատին թանձրութեան մէջ ծածկուած են, եւ երեքն ալ հաւասար են լայնութեամբ: Ներքին սիւները քառակուսի են և առանց խոյակի, որմանկարները, կամարները և զարդարանքները մասնայատկութիւններ ունին և որոնք բոլորովին անծանօթ են արեւմտեան եկեղեցիներուն, և ընտանի են արաբական ճարտարապետութեան: Այս եկեղեցին կը վերաբերի կրօնական այն շինութեանց որ ժԲ. դարու կիսուն տեղացիներէն ձեռնարկուած են:

Բացարձակ կերպով անոր պատմութեան մասին բան մը չենք գիտեր, միայն լատին մատենագիրները կը յայտնեն թէ Կարիէթ էլ-էնապը Անարոլթն է եւ եկեղեցին ալ նուիրուած է Ս. Երեմիայի: Կ'ըսուի նաև թէ Անաթովթ երեք մղոն հեռու է Երուսաղէմի արեւելքը (Bar. gd. էջ 51 - 53):

4. Եմմաւուս - Նիկոպոլիս (Ամուս). — Այս տեղը կը կոչուի դաշտի Եմմաւուս, որ Գ. դարուն առաւ